

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ
JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 22

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2022

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)

Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր

Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ

Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր

Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր

Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ

Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ

Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր

Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.

Տեր-Սաթևոսյան Վահրամ պ.գ.դ.

Գրեկյան Երվանդ պ.գ.դ.

Րեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)

Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)

Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)

Իլյա Յակուբովիչ բ.գ.դ., պրոֆեսոր (Գերմանիա)

Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Արաբ Փաշայան

ՍԱՌԻԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՆ ԵՎ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ». ԵՐԿԱԿԻ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....7-21

Գոռ Գևորգյան

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ (1981-2014 ԹԹ.).....22-34

Վահե Հակոբյան, Տաթևիկ Մկրտչյան, Հայկ Քոչարյան

ԹՎԻԹԵՐԻ ԱՐԱԲԱԼԵԶՈՒԻ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ 2020Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱԶՈՐԴԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ (2020-2021ԹԹ.).....35-49

Տաթևիկ Մկրտչյան

ԻՄԱՍ ԱԼԻԻ ՆԱՄԱԿԸ ՄԱԼԻՔ ԱԼ-ԱՇԹԱՐԻՆ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՎԱԽՈՒԹՅԱՆ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ՄԻ ՆՍՈՒՇ.....50-61

Աննա Անտոնյան

ՏԱԲԱԿԱԹ ԺԱՆՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 9-ՐԴ ԴԱՐԻ ԱՐԱԲԱՍՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ.....62-75

Սյարսուսկ Բաղդասարյան

2005 Թ.-Ի ԻՐԱԶՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐԸ.....76-94

Թյուրքագիտություն

Լուսինե Խաչատրյան, Անուշիկ Մարտիրոսյան, Ալեքսանդր Մաֆարյան

ԹՈՒՐԻՔԵՐԵՆԻ ÜZERE ԵՎ DİYE ՀԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐԸ.....95-109

Մամլեղ Ռանագրան

ՆՈՐԱՀԱՅՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐ «ՔՅՈՈՕՂԼԻ»

ԷՊՈՍԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԱՐՔԵՐԱԿՆԵՐՈՒՄ.....110-116

Թանարա Աղանայրան

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ

ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ

ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ 1965-1969 ԹԹ.....117-131

Այբինա Մուրադյան

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ

ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ

ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ

ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ.....132-152

Իրանագիտություն

Արփինե Առուշանյան

ՀՈԳՈՒ ՎԵՐԱՄԱՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

ԾԱՅՐԱՀԵՂ ԾԻԱՅԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐՈՒՄ.....153-167

Լիանա Պետրոսյան

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԽՈՍՔԻ ԱԶՏՈՒԹՅՈՒՆԸ ԻԻՀ-

ՈՒՄ Մ. ԱՀՄԱԴԻՆԵՏԱԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԾՐՋԱՆՈՒՄ

(2005-2013թ.թ.).....168-182

*Ժաննա Վարդանյան **

ԻՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐՐՈՐԴ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ՀԵՏՈ.....183-195

Աշխեն Հովսեփյան

ՀԱՅ-ՀՆԴԿԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ.....196-204

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Արտյոմ Տոնոյան

ՀՈՎԻՏԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ, ԱՔԵՆԵՆՅԱՆ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՅԱԿԱՆ

ՔԱԺԱՆՈՒՄԸ, «Էդրոսադո» հրատ.,

Հայաստանի Հանրապետություն, Գյումրի, 2021, 456 էջ:.....205-211

CONTENT

Arabic Studies

Araks Pashayan

SAUDI ARABIA AND THE «ARAB SPRING». THE POLICY OF
DOUBLE STANDARDS.....7-21

Gor Gevorgyan

TRANSFORMATION OF EGYPT`S ARAB POLICY:
OPPORTUNITIES AND CHALLENGES (1981-2014) 22-34

Vahe Hakobyan, Tatevik Mkrtchyan, Hayk Kocharyan

DISCUSSION OF THE MAIN DISCOURSES OF THE 2020 44-DAY
ARTSAKH WAR AND THE SUBSEQUENT PERIOD IN
THE ARABIC-LANGUAGE TWITTER (2020-2021).....35-49

Tatev Mkrtchyan

IMAM ALI'S LETTER TO MALIK AL-ASHTAR AS A MODEL OF
JUST GOVERNANCE/RULERSHIP, RELIGIOUS
RIGHTEOUSNESS AND PIETY.....50-61

Anna Antonyan

THE FORMATION OF THE ṬABAQĀT GENRE IN THE
9TH CENTURY ARAB-MUSLIM WRITTEN CULTURE 62-75

Spartak Baghdasaryan

THE 2005 IRAQI CONSTITUTION AND THE FORMATION
OF A NEW SYSTEM OF GOVERNMENT..... 76-94

Turkic Studies

Lusine Khachatryan, Anushik Martirosyan, Alexander Safaryan

ON THE PECULIARITIES OF TEACHING TERMS FORMED
WITH PREPOSITIONS ÜZERE AND DİYE OF THE TURKISH
LANGUAGE AND THEIR COLLOCATIONS
IN THE ARMENIAN LANGUAGE.....95-109

Samvel Ramazyan
NEWLY DISCOVERED ARMENIAN PERSONAGES IN
THE TURKISH VERSIONS OF THE EPIC “KOROGLU” 110-116

Tamara Aghamalyan
IDEOLOGICAL BASIS OF THE REPUBLICAN PEASANTS’
NATION PARTY 1965-1969 117-131

Albina Muradyan
PUBLIC PERCEPTIONS AND MANIFESTATIONS OF RELIGIOUS
AND TRADITIONAL BELIEFS DURING
THE CORONAVIRUS PANDEMIC IN TURKEY 132-152

Iranian Studies

Arpine Arushanyan
THE IDEA OF THE TRANSMIGRATION OF SOULS
IN EXTREME SHIA SECTS 153-167

Liana Petrosyan
HUMAN RIGHTS AND FREEDOM OF SPEECH IN IRI DURING
M. AHMADINEJAD'S PRESIDENCY (2005-2013) 168-182

Zhanna Vardanyan
IRAN'S POSITION DURING AND AFTER
THE THIRD ARTSAKH WAR 183-195

Ashkhen Hovsepyan
ARMENIAN-INDIAN RELATIONS. HISTORICAL
OVERVIEW 196-204

BOOK REVIEW

Artyom Tonoyan
*Hovhannes Khorikyan, The Administrative Divisions of Achaemenid
Iran, “Eldorado” publisher, RA, Gyumri, 2021, 456 p: 205-211*

**2003 թ.-ի ԻՐԱԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՁ**

Բանալի բառեր՝ Սադդամ Հուսեյն, ամերիկյան ներխուժում, էթնոդավանական հակասություններ, նոր սահմանադրություն, կառավարման համակարգ

2003 թ.-ի գարնանը ԱՄՆ գլխավորած կոալիցիոն ուժերի ներխուժումը Իրաք, և Սադդամ Հուսեյնի սուննիական վարչակարգի տապալումը հանգեցրին իրաքյան հասարակության ներսում առկա էթնոդավանական հակասությունների աննախադեպ սրացման: Հաջորդող շրջանում առանցքային էր դառնում հետպատերազմյան Իրաքի վերակառուցման և կառավարման հարցը:

Սկզբնապես դիտարկվում էր Իրաքում գաղութային պրոտեկտորատ հաստատելու, այն շրջանների բաժանելու և Սպիտակ տան կողմից նշանակված ամերիկացի պաշտոնյաների միջոցով կառավարելու հարցը²: ԱՄՆ-ն դիտարկում էր նաև Իրաքում հավատարիմ կառավարություն ձևավորելու հնարավորությունը: Այդ նպատակով կոալիցիոն ուժերի հետ Իրաք ժամանեց նաև արտերկրի հակասադդամյան ընդդիմությունը, որը գլխավորում էր Ահմադ Չալաբին³:

Հողվածում փորձ է արվում վեր հանել էթնոդավանական գործոնի ազդեցությունը Իրաքի կառավարման համակարգի վրա, ներկայացնել տարբեր համայնքների ներգրավածությունը

¹ արաբագիտության մագիստրոս Էլ. հասցե՝ spartakbaghdasaryan2@gmail.com

² Иракский кризис и становление нового мирового порядка. М., 2004 ; стр. 541.

³ Marr Ph. The Modern History of Iraq. 3-rd ed. Westview Press, Philadelphia 2012. P. 252.

իշխանության մարմիններում: Վերլուծել 2005 թ.-ի մշտական սահմանադրության մեջ էթնոդավանական համայնքներին տրված իրավունքները և ազգային-պետական մարմինների ստեղծումը:

2003 թ.-ին սունիական գերիշխանության վերացումից հետո ստեղծված նոր պայմաններում պետք էր հաշվի առնել ուժերի իրական դասավորությունը իշխանության մարմինների ձևավորման գործում: Իրաքի ամբողջականությունը պահպանելու համար անհրաժեշտ էր շիաներին, քրդերին և այլ էթնոդավանական համայնքներին ներգրավել կառավարման համակարգում:

2003 թ.-ի մայիսին ձևավորվեց Ժամանակավոր կոալիցիոն վարչակազմը: Այն գլխավորում էր հայտնի դիվանագետ Փոլ Բրեմերը⁴: Սակայն ԱՄՆ-ն, հասկանալով, որ հնարավոր չէ Իրաքի հետպատերազմյան կառավարումն իրականացնել միայն օտարերկրյա վարչակազմի միջոցով՝ հետամուտ եղավ, ՄԱԿ-ի Ան կողմից 2003 թ.-ի մայիսի 22-ին ընդունված 1483-րդ բանաձևի շրջանակներում, Իրաքի վերակառուցմանն ու քաղաքական համակարգի ձևավորմանը, ինչպես նաև անցումային շրջանի կառավարման մարմինների ստեղծմանը, որում ներգրավված պիտի լինեին նաև իրաքյան քաղաքական ուժերի ներկայացուցիչները⁵:

Այդպիսով, ձևավորվեց կառավարման նոր մարմին՝ Իրաքի կառավարման Ժամանակավոր խորհուրդը, որն ուներ 25 անդամ և բաղկացած էր Իրաքի տարբեր քաղաքական ուժերից, ինչպես նաև անկախ հասարակական գործիչներից: Այն գլխավորում էր շիադավան Ահմադ Չալաբին՝ Իրաքի ազգային կոնգրեսի գլխավոր քարտուղարը: 2003 թ.-ի օգոստոսի 31-ին ստեղծվեց

⁴ Dawisha A. Iraq. A political History. Oxford Princeton University Press. P. 243.

⁵ Resolution 1483 (2003) / adopted by the Security Council at its 4761st meeting, on 22 May 2003 (<https://digitallibrary.un.org/record/495555?ln=ru> մուտք 08.06.2022)

Ժամանակավոր կառավարման ևս մեկ կարևոր կառույց՝ անցումային կառավարությունը: Այն ևս ուներ 25 անդամ⁶:

Ե՛վ Ժամանակավոր կառավարման խորհուրդը, և՛ անցումային կառավարությունը ձևավորվել էին էթնոկոնֆեսիոնալ հիմքի վրա: Այսպիսի մոտեցումը առ այսօր գերիշխող է Իրաքի քաղաքական գործընթացներում:

2003 թ.-ի նոյեմբերի 13-ին Կոալիցիոն վարչակազմը և Իրաքի ժամանակավոր կառավարման խորհուրդը քաղաքական գործընթացի մասին համաձայնագիր ստորագրեցին⁷: Համաձայնագիրը նախատեսում էր մինչև 2004 թ.-ի փետրվարի վերջը մշակել Իրաքի հիմնական օրենքը (Ժամանակավոր սահմանադրությունը), որի հիմքի վրա 2004 թ.-ի հունիսի 30-ին պետք է ձևավորվեին անցումային իշխանության մարմինները, իսկ դրանից հետո կոալիցիոն իշխանությունները դադարեցնելու էին իրենց գործունեությունը⁸:

Այսպիսով, 2004 թ.-ի մարտի 8-ին Իրաքի ժամանակավոր կառավարման խորհուրդը հաստատեց ժամանակավոր սահմանադրությունը, որը պետք է գործեր անցումային շրջանում⁹:

Այս փաստաթղթի պաշտոնական անվանումն էր «Իրաքի անցումային շրջանի կառավարման մասին օրենք», որում ամփոփված էին Իրաքի անցումային կառավարման մարմինների ձևավորման հիմնական դրույթներն, ինչպես նաև դրանց լիազորություններն ու պարտավորությունները: Միաժամանակ

⁶ Evans, G (2003, August 26), ‘Only self-rule will bring stability to Iraq, <https://www.crisisgroup.org/middle-east-north-africa/gulf-and-arabian-peninsula/iraq/only-self-rule-will-bring-stability-iraq> (Մուտք: 22.06.2022թ.):

⁷ Жигалина О. И., Курдский вопрос в начале XXI века // Курдский вопрос в Западной Азии в начале XXI века. М.: ИБВ, 2006; стр. 13.

⁸ Сапронова М. А., Иракская конституция в прошлом и настоящем (из истории конституционного развития Ирака). ИБВ, М. 2006 ; стр. 78

⁹ قانون إدارة الدولة العراقية للمرحلة الإنتقالية (govinfo.library.unt.edu/cpa-iraq մուտք 10.03.2022թ.).

ամրագրվում էին քաղաքացիների հիմնարար ազատություններն ու իրավունքները:

Ժամանակավոր սահմանադրության բուն նպատակներից էր պետական մարմինների ձևավորումն ու պետական-քաղաքական նոր համակարգի հաստատումը, որն էլ վերջնականապես պետք է ամրագրվեր մշտական սահմանադրությամբ: Ժամանակավոր սահմանադրությամբ ստեղծվում էին պետական համակարգի հետևյալ մարմինները՝ Ազգային ժողով, Նախագահական խորհուրդ, Նախարարների խորհուրդ և դատական իշխանություն¹⁰:

Ժամանակավոր սահմանադրության հիման վրա, ձևավորեցին անցումային իշխանության մարմինները: 2004 թ-ի հունիսի 1-ին տեղի ունեցան երկրի ղեկավարի ընտրությունները: Թեև բավական երկար ժամանակ Իրաքի կառավարման բարձրագույն խորհուրդը, ամերիկյան ժամանակավոր վարչակազմը և ՄԱԿ-ի հատուկ ներկայացուցիչ Լ. Բրախմին չէին կարողանում պայմանավորվել Իրաքի ապագա ղեկավարի միասնական թեկնածուի շուրջ: Առավել հավանական թեկնածուներն էին սուննի գործիչ Ղազի ալ-Յավերը, որին պաշտպանում էր Կառավարման բարձրագույն խորհուրդը և արտաքին գործերի նախկին նախարար Ադնան Փաչաչին: Նրա թեկնածությունն առաջարկում էին Փ. Բրեմերը և Լ. Բրախմին:

Ի վերջո փորձառու քաղաքական գործիչ Ա. Փաչաչին հոգուտ Ղ. Յավերի հանեց իր թեկնածությունը, որն էլ զբաղեցրեց նախագահական խորհրդի ղեկավարի պաշտոնը: Նրա երկու տեղակալներ դարձան շիա, Դավա կուսակցության¹¹

¹⁰ قانون إدارة الدولة العراقية للمرحلة الإنتقالية - المادة الرابعة والعشرون.

¹¹ Շիա համայնքում ազդեցիկ դերակատարում ունեւ Իսլամական կոչի կուսակցությունը (արաբերեն անվանումը՝ حزب الدعوة الإسلامية (Hizb ad-Da'wa al-Islamiyya): Մասնագիտական գրականության մեջ օգտագործվում է կրճատ ալ-Դավա ձևը): Կուսակցությունը ակտիվ քաղաքական գործունեություն սկսել է ծավալել 1960-

ղեկավարներից Իբրահիմ Չաֆարին և քուրդ, Քրդստանի ղեմավարական կուսակցության անդամ Ռոջ Նուրի Շավեր:

2004 թ.-ի հունիսի 9-ին ՄԱԿ-ի ԱԽ-ն միաձայն ընդունեց 1546-րդ բանաձևը, որը վերաբերում էր Իրաքի խնդրին¹²: Անվտանգության խորհուրդն իր համաձայնությունն էր հայտնում Իրաքում ժամանակավոր կառավարություն ձևավորելու և Կոալիցիոն ժամանակավոր վարչակազմը լուծարելու վերաբերյալ:

Ժամանակավոր կառավարությունը կազմված էր 26 նախարարից, ընդ որում 200 ամերիկացի և բրիտանացի շարունակելու էին իրենց աշխատանքը որպես կառավարության խորհրդականներ: Վարչապետի պաշտոնում պետք է առաջադրվեր Իրաքի բնակչության մեծամասնությունը կազմող շիա համայնքի ներկայացուցիչ: Արդյունքում վարչապետ դարձավ աշխարհիկ քաղաքական գործիչ, Ժամանակավոր կառավարման խորհրդի նախկին անդամ և հակասադրամյան ընդդիմության առաջնորդներից Այադ Ալավին, իսկ փոխվարչապետ նշանակվեց Քրդստանի հայրենասիրական միության ներկայացուցիչ Բարհամ Սալիհը¹³:

Ժամանակավոր կառավարության քաղաքական խնդիրը խորհրդարանական ընտրությունների կազմակերպումն էր, որը պետք է անցկացվեր մինչև 2005 թ.-ի հունվարի 31-ը:

ականների վերջին: Այն սկզբնապես եղել է գաղտնի կազմակերպություն, այդ պատճառով գիտական գրականության մեջ կուսակցության հիմնադրման վերաբերյալ տարբեր տարեթվեր են նշվում՝ 1957 թ-ից մինչև 1960-ականների վերջ:

¹² Resolution 1546 (2004) Adopted by the Security Council at its 4987th meeting, on 8 June 2004 (<http://unscr.com/en/resolutions/doc/1546> մուտք 14.06.2022)

¹³ Конфликты на Востоке: Этнические и конфессиональные /Под ред. А. Д. Воскресенского. — М.: Аспект Пресс, 2008; стр. 195

Թեև երկրի ներքաղաքական իրավիճակը շարունակում էր ծայրահեղ լարված մնալ, այնուամենայնիվ ընտրություններն անցկացվեցին նախանշված ժամանակահատվածում¹⁴ :

Նորընտիր խորհրդարանը երկրի նախագահ ընտրեց քուրդ գործիչ, Քրդստանի հայրենասիրական միության առաջնորդ Ջալալ Թալաբանիին, իսկ տեղակալներ սուննի Ղազի ալ-Յավերին և շիա Ադիլ Աբդել Մահդիին:

2005 թ.-ի ապրիլի 7-ին տեղի ունեցած նախագահի երդմնակալության արարողությունից հետո հայտարարվեց նաև նոր վարչապետի անունը: Այդ պաշտոնում նշանակվեց Դավա կուսակցության առաջնորդ, նախկին փոխնախագահ Իբրահիմ Ջաֆարին:

Երկարատև բանակցություններից հետո ապրիլ-մայիսին հաստատվեց նաև կառավարության կազմը, որում շիաներն ունեին բացահայտ առաջատար դիրքեր: Բացի վարչապետի, փոխնախագահի և փոխվարչապետի (այդ պաշտոնում նշանակվել էր Իրաքի ազգային կոնգրեսի ղեկավար Ահմադ Չալաբին) պաշտոններից շիաների ձեռքում էին կենտրոնացել նախարարական 32 տեղերից 17-ը՝ այդ թվում ներքին գործերի, նավթի, ֆինանսների, էլեկտրաէներգիայի, ինչպես նաև ազգային անվտանգության հարցերով պետական նախարարի պաշտոնները¹⁵:

Նոր կառավարությունում քրդական համայնքը ևս նախարարական պաշտոններ ստացավ: Քրդստանի հայրենասիրական միությանը բաժին հասավ 4 նախարարական աթոռ, իսկ Քրդստանի Դեմոկրատական կուսակցությունը ստացավ փոխվարչապետի (այն զբաղեցնում էր նախկին

¹⁴ Independent Electoral Commission of Iraq: (psephos.adam-carr.net մուտք՝ 23.06.2022թ.):

¹⁵ Конфликты на Востоке: Этнические и конфессиональные /Под ред. А. Д. Воскресенского. — М.: Аспект Пресс, 2008; стр. 193.

փոխնախագահ Ռ. Շավերը) և 4 նախարարական աթոռ, այդ թվում արտաքին գործերի նախարարի առանցքային պաշտոնը:

Նոր կառավարության առաջնահերթ խնդիրներից էր երկրում անվտանգության և կայունության հաստատումը, ինչպես նաև մշտական սահմանադրության մշակումը, որի հիմքի վրա պետք է անցկացվեին խորհրդարանական նոր ընտրությունները և վերջնականապես ձևավորվեին ազգային-պետական իշխանության մարմինները:

Անվտանգության հաստատման ուղղությամբ կառավարության գործադրած ջանքերն հաջողությամբ չպսակվեցին: Երկրում տիրող ռազմաքաղաքական բարդագույն վիճակի, կառավարության անփորձության պայմաններում գրեթե անհնար էին դառնում Իրաքի քայքայված տնտեսությունը վերականգնելու և բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրները լուծելու առաջնահերթությունները: Այս իրավիճակում կառավարությունն ուշադրությունը կենտրոնացրեց նոր սահմանադրության մշակման վրա¹⁶:

Երկրի հիմնական օրենքի տեքստը մշակելու ժամկետները, որ սահմանվել էր Ժամանակավոր սահմանադրությամբ, երկու անգամ երկարաձգվեց, քանի որ երկրի երեք հիմնական էթնոդավանական համայնքների՝ շիաների, սուննիների և քրդերի միջև սահմանադրական մի շարք առանցքային դրույթների շուրջ հնարավոր չեղավ փոխզիջումային լուծման հասնել: Առավել խոր հակասություններ էին առաջացել հասարակական կյանքում իսլամի դերի և պետության դաշնային կառուցվածքի շուրջ: Իրավիճակն այնքան էր սրվել, որ մի խումբ շիա ազդեցիկ գործիչներ սկսեցին պահանջել Իրաքի հարավում առանձին

¹⁶ В. Гусейнов, А. Денисов, Н. Савкин, С. Демиденко Большой Ближний Восток: стимулы и предварительные итоги демократизации. М.: ОЛМА Медиа Групп, 2007; стр. 102.

ինքնավար շրջան ստեղծել, որը գործնականում կարող էր հանգեցնել կենտրոնական իշխանություններից անջատ պետական միավորի ձևավորման: Սուսնիններն իրենց հերթին լուրջ վտանգ էին զգում, որ նավթի վաճառքից ստացված եկամուտներից չեն կարողանա մասնաբաժին ստանալ, քանի որ հյուսիսի և հարավի նավթային հարուստ շրջանները կարող էին ամբողջությամբ անցնել քրդերի և շիաների վերահսկողության տակ: Միաժամանակ սուսնինների համար անընդունելի էին Բասսի նախկին անդամների վրա դրված սահմանափակումների մասին սահմանադրական դրույթները: Հիշյալ պատճառներից ելնելով՝ սուսնի գործիչները բնակչությանը կոչ էին անում հանրաքվեի ժամանակ դեմ քվեարկել Իրաքի տարածքային ամբողջականությունը վտանգող սահմանադրությանը: Պետության դաշնային կառուցվածքին դեմ էին նաև ազգային փոքրամասնություններից թուրքմենները և ասորիները¹⁷:

Այդուամենայնիվ, 2005 թ.-ի մայիսի վերջին հնարավոր եղավ ձևավորել սահմանադրական հանձնաժողով, որը բաղկացած էր անցումային խորհրդարանում ներգրավված քաղաքական ուժերին ներկայացնող 55 անդամներից: Սահմանադրական գործընթացին բոլոր իրաքցիների մասնակցության պատրանք ստեղծելու նպատակով հանձնաժողովում ավելացվեց սուսնինների թիվը, սակայն դա որևէ կերպ չազդեց գործընթացի վրա: Արդեն 2005 թ.-ի հունիսին սահմանադրության տեքստի մեծ մասը պատրաստ էր¹⁸:

Նույն թվականի հոկտեմբերի 15-ին համաժողովրդական հանրաքվեի արդյունքում ընդունվեց նոր սահմանադրությունը, որը նոր փուլ էր Իրաքի իրավաքաղաքական զարգացման ճանապարհին:

¹⁷ Сапронова М.А., Иракская конституция в прошлом и настоящем (из истории конституционного развития Ирака). ИБВ, М. 2006; стр. 89.

¹⁸ Конфликты на Востоке: Этнические и конфессиональные /Под ред. А. Д. Воскресенского. — М.: Аспект Пресс, 2008; стр. 194.

Իրաքի Ընտրական հանձնաժողովի հրապարակման համաձայն սահմանադրությանը կողմ էր արտահայտվել բնակչության 78 տոկոսը, դեմ 21-ը: Ընդհանուր առմամբ հանրաքվեին մասնակցել էին քվեարկելու իրավունք ունեցողների 63 տոկոսը: Սահմանադրությանը դեմ էին արտահայտվել գերազանցապես սուննիական բնակչություն ունեցող Անբար նահանգի 96,95 տոկոսը, Սալահ ադ-Դին նահանգի 81 տոկոսը, Նինվե նահանգի 55 տոկոսը: Ի տարբերություն վերոգրյալների առավելապես սուննի բնակչություն ունեցող Դիյալա նահանգը կողմ էր քվեարկել¹⁹:

Սահմանադրությունը բաղկացած էր ընդհանուր նախաբանից, 6 գլխից և 139 հոդվածից²⁰:

Արաբական երկրների սահմանադրական զարգացման պատմությունն ուսումնասիրող ռուս հեղինակ Մ. Սապրոնովան նշում է, որ Իրաքի նոր սահմանադրությունն իրենից ներկայացնում է արևմտյան ժողովրդավարության, մարդու իրավունքների և իսլամական արժեքների ձուլվածք, որն էթնոկոնֆեսիոնալ համայնքների միջև որոշակի փոխզիջումների արդյունք էր²¹: Ասվածն առավել ակնառու է սահմանադրության մի շարք հոդվածներում, որոնք հակասականության տարրեր են պարունակում և լրացուցիչ մեկնաբանման կարիք ունեն:

Սահմանադրության նախաբանում մատնանշվում էր Իրաքի առանձնահատուկ աշխարհաքաղաքական դիրքը, մարգարենների, սրբազան իմամների, քաղաքակրթության առաջնորդների, այբուբենի հայրենիք լինելու հանգամանքը²²:

¹⁹ Гусейнов В. А., Денисов А. В., Савкин Н. П., Демиденко С., Большой Ближний Восток: стимулы и предварительные итоги демократизации. М.: ОЛМА Медиа Групп, 2007; стр. 104

²⁰ [\(/https://iq.parliament.iq\)](https://iq.parliament.iq) دستور جمهورية العراق

²¹ Сапронова М.А., Иракская конституция в прошлом и настоящем (из истории конституционного развития Ирака). ИБВ, М. 2006; стр. 90.

²² الديباجة دستور جمهورية العراق .

Այն էթնոկոնֆեսիոնալ տարբեր համայնքներից բաղկացած, հասարակական շարունակական երկպառակությունների և հակամարտությունների արդյունքում քաղաքացիական պատերազմի շեմին կանգնած երկիրը միավորելու գաղափարական հիմք էր ստեղծում:

Սահմանադրության առաջին հոդվածը Իրաքը հռչակում էր անկախ, ինքնիշխան, ժողովրդավարական և դաշնային պետություն՝ խորհրդարանական կառավարման հիմքով²³:

Առանձին հոդվածով ամրագրվում էր իսլամի դերը հասարակական-քաղաքական կյանքում: Իսլամը հռչակվում էր պետական կրոն և օրենքի հիմնական աղբյուր: Միաժամանակ սահմանադրության մեջ արձանագրվում էր Իրաքի բնակչության մեծամասնության իսլամական պատկանելիությունը, ինչպես նաև երաշխավորվում էր դավանանքի ու կրոնական ծիսակարգեր անցկացնելու ազատությունը: Երկրորդ հոդվածում ասվում էր, որ չի կարող ընդունվել այնպիսի օրենք, որն հակասում է իսլամի հիմքերին: Մրան զուգահեռ նշվում էր, որ որևէ օրենք չի կարող հաստատվել, եթե այն հակասում է ժողովրդավարության սկզբունքներին²⁴:

Սահմանադրության մեջ չէր նշվում շարիաթի դերակատարման մասին, ինչն էլ վկայում էր պետության աշխարհիկության մասին:

Անհրաժեշտ էր հաշվի առնել նաև այլ կրոնական փոքրամասնությունների իրավունքներն ու ավանդույթները: Այդ նկատառումներից ելնելով՝ ամրագրվում էր, որ յուրաքանչյուր դավանանքի հետևորդ ազատ է կրոնական ծիսակատարություններ անցկացնել, ներառյալ իմամ Հուսեյնին

²³ دستور جمهورية العراق الباب الاول. المبادئ الأساسية المادة 1 .
²⁴ دستور جمهورية العراق الباب الأول المبادئ الأساسية . المادة الثانية

նվիրված ծիսակարգը: Պետությունը երաշխավորում է նաև հոգևոր ծառայության ազատությունը²⁵:

Հաշվի առնելով էթնոկոնֆեսիոնալ համայնքների առկայությունը՝ սահմանադրության երրորդ հոդվածը Իրաքը հռչակում էր բազմազգ և բազմակրոն երկիր, ընդգծելով, որ այն հանդիսանում է իսլամական աշխարհի մաս և Արաբական պետությունների լիզայի ակտիվ անդամ²⁶:

2005 թ.-ի սահմանադրությամբ էթնոկոնֆեսիոնալ համայնքների դավանաբանական իրավունքները ամրագրելուց զատ հաշվի էր առնվում նաև լեզվական գործոնը: Նշվում էր, որ արաբերենը և քրդերենը Իրաքի երկու պաշտոնական լեզուներ են: Միաժամանակ երաշխավորվում էր, որ մյուս ազգային փոքրամասնությունները, մասնավորապես ասորիները, թուրքմենները և հայերը կարող են պետական կրթական հաստատություններում կրթությունը կազմակերպել սեփական ազգային լեզուներով: Երկրորդ պաշտոնական լեզուներ էին հռչակվում ասորերենը և թուրքմեներենը: Այս դրույթը տարածվում էր տարածքային այն միավորներում, որտեղ բնակվում էին հիշյալ էթնոսի ներկայացուցիչները: Ի հավելումն վերոգրյալի սահմանվում էր, որ յուրաքանչյուր նահանգում կամ շրջանում թույլատրվում է պաշտոնական լեզուներին զուգահեռ օգտագործել այլ տեղական լեզու, եթե այն ընդունվի տվյալ տարածքի բնակչության համընդհանուր հանրաքվեի արդյունքում:

Հետաքրքրական է Սահմանադրության յոթերորդ հոդվածը, որում մասնավորապես ասվում էր, որ արգելվում է ցանկացած կազմակերպության կամ խմբի գործունեությունը, որը կարդարացնի կամ կքարոզի ռասսայական խտրականություն, ահաբեկչություն և էթնիկ զտումներ: Առավել ուշագրավ է հոդվածի

²⁵ دستور جمهورية العراق الفصل الثاني الحريات المادة الحادية والأربعون ,
²⁶ دستور جمهورية العراق الباب الاول. المبادئ الأساسية المادة الثالثة

մյուս հատվածը, որով արգելվում էր «սադդամյան բաասի» գործունեությունը ինչ անվան տակ էլ այն հանդես գար²⁷:

Սահմանադրությամբ հստակորեն տարանջատվում էին իշխանության բարձրագույն մարմինները: Այստեղ կանդադարանաք սահմանադրության մեջ օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների մասին դրույթներին:

Իրաքյան Սահմանադրությամբ առաջնակարգ տեղ էր հատկացվում օրենսդիր մարմնին, որով ամրագրվում էր Իրաքի կառավարման խորհրդարանական համակարգը: Նախատեսվում էր երկպալատ խորհրդարանի ստեղծում՝ կազմված Ներկայացուցիչների խորհրդից և Խորհրդակցական խորհրդից²⁸:

Ներկայացուցիչների խորհուրդը ընտրվում էր համընդհանուր, ուղիղ, գաղտնի քվեարկությամբ, 100 հազար բնակչից 1 պատգամավոր սկզբունքով: Այն ընտրվում էր 4 տարի ժամկետով և պետք ներկայացնեք Իրաքի ամբողջ բնակչությանը²⁹:

Իրաքի խորհրդարանը օժտված էր պառլամենտական երկրներին բնորոշ՝ բավական լայն լիազորություններով: Այդ լիազորությունների շրջանակներում էին օրենսդիր գործունեության ծավալումը, թեև սահմանադրությամբ հստակորեն մատնանշված չէին օրենքների մշակման և ընդունման կարգը, որը լրացուցիչ պարզաբանման կարիք ուներ:

Խորհրդարանի կարևորագույն լիազորություններից էին պետական բյուջեի հաստատումը, միջազգային պայմանագրերի վավերացումը, ինչպես նաև գործադիր իշխանության վերահսկումը: Միաժամանակ խորհրդարանին էին վերապահված երկրում արտակարգ դրության հաստատումը, իսկ վարչապետի և

²⁷ دستور جمهورية العراق الباب الاول. المبادئ الأساسية المادة السابعة
²⁸ دستور جمهورية العراق الباب الثالث السلطات الاتحادية .
²⁹ دستور جمهورية العراق الباب الثالث السلطات الاتحادية، المادة 47.

նախագահի համատեղ առաջարկի պարագայում խորհրդարանը կարող էր ձայների 2/3-ով պատերազմ հայտարարել³⁰:

Ներկայացուցիչների պալատը ազատ էր արձակվում անդամների 1/3-ի պահանջով կամ վարչապետի առաջարկությամբ, որը պետք է հաստատեր նախագահը:

Խորհրդարանի երկրորդ պալատը կազմված էր լինելու նահանգների և շրջանների ներկայացուցիչներից: Վերջինիս կազմը, լիազորությունների շրջանակը և այլ հարցեր պետք է կարգավորվեին առանձին օրենքով:

Պետական կառավարման նոր համակարգի կայացման գործում կարևոր էր գործադիր իշխանության լիազորությունների սահմանադրական ամրագրումը:

Իրաքյան սահմանադրության համաձայն գործադիր իշխանությունը բաժանվում էր երկու ճյուղի ի դեմս հանրապետության նախագահի և նախարարների խորհրդի:

Երկրի նախագահն հանդիսանում է պետության գլուխը, ազգային միասնության խորհրդանիշը, սահմանադրության երաշխավորը, Իրաքի անկախության, տարածքային միասնականության և անվտանգությանը պաշտպանը³¹:

Նախագահն ընտրվում է Ներկայացուցիչների խորհրդի ձայների 2/3-ի հարաբերակցությամբ, չորս տարի ժամկետով: Նախագահը կարող է ընտրվել ոչ ավել քան երկու անգամը:

Իրաքի պետական կառավարման համակարգում կարևորագույն դերակատարում ունի կառավարությունը: Ինչպես նշում է Մ. Սապրոնովան, ի տարբերություն մյուս արաբական պետությունների, որտեղ կառավարությունն ամբողջապես գտնվում է պետության առաջին դեմքի ենթակայության տակ, Իրաքում կառավարության ձևավորման գործընթացը բնորոշ է

³⁰ دستور جمهورية العراق الباب الثالث السلطات الاتحادية، المادة 73 .
³¹ دستور جمهورية العراق الباب الثالث السلطات الاتحادية، الفصل الثاني السلطة التنفيذية.

խորհրդարանական հանրապետությունների ավանդույթներին³²: Սահմանադրության 74-րդ հոդվածը նախատեսում էր նաև, որը վարչապետի և նախարարների համար պարտադիր է համալսարանական կրթություն ունենալը³³:

Նախարարների խորհրդի անդամները, սահմանադրության համաձայն, ընտրվում են Ներկայացուցիչների խորհրդի անդամների ձայների բացարձակ մեծամասնությամբ³⁴:

Կառավարությունը պատասխանատվություն է կրում պետության ընդհանուր քաղաքականության, երկրի զարգացման ծրագրի մշակման և կենսագործման, բյուջեի կատարողականի համար: Այն ունի նաև օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իրավունք: Կառավարության ղեկավարը իբրև գործադիր իշխանության անմիջական ներկայացուցիչ, պատասխանատվություն է կրում երկրի ընդհանուր քաղաքականության համար: Վերջինս նաև պետության Զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է:

Սահմանադրության համաձայն վարչապետը և նախարարները կուլեկտիվ և անհատական պատասխանատվություն են կրում խորհրդարանի առջև³⁵:

Կարևոր է արձանագրել, որ իրաքյան մշտական սահմանադրությամբ որդեգրվել է պետության դաշնային կառուցվածքը, որն իրենից ենթադրում է իշխանության ապակենտրոնացում, իսկ տեղական իշխանություններին շնորհվում էր լայն լիազորություններ³⁶:

Ամփոփելով, պետք է արձանագրել, որ Սահմանադրության որոշ դրույթներ կրում էին ղեկավարատիվ բնույթ, իսկ որոշները նաև

³² Сапронова М.А., Иракская конституция в прошлом и настоящем (из истории конституционного развития Ирака). ИБВ, М. 2006; стр. 103.

³³ دستور جمهورية العراق الباب الثالث السلطات الاتحادية الفصل الثاني السلطة التنفيذية المادة 74.

³⁴ دستور جمهورية العراق الباب الثالث السلطات الاتحادية الفصل الثاني السلطة التنفيذية المادة 73.

³⁵ دستور جمهورية العراق الباب الثالث السلطات الاتحادية الفصل الثاني السلطة التنفيذية المادة 80.

³⁶ دستور جمهورية العراق الفصل الرابع الهيئات المستقلة المادة 108.

լրացուցիչ մեկնաբանման կարիք ունեն: Այսքանով հանդերձ Սահմանադրությունը վարչական, քաղաքական, մշակութային, կրթական ոլորտներում բավական լայն իրավունքներ է շնորհել էթնոդավանական փոքրամասնություններին:

Սահմանադրության հաստատումից հետո սկիզբ դրվեց նաև պետական իշխանության մարմինների ձևավորմանը: 2005 թ.-ի դեկտեմբերի 15-ին մշտական սահմանադրության հիման վրա տեղի ունեցան խորհրդարանական նոր ընտրությունները, որի մասնակցության ցուցանիշը կազմում էր ընտրելու իրավունք ունեցողների 79,6 տոկոսը³⁷: Թեև սուննիական համայնքը այս անգամ չբոյկոտեց ընտրությունները, սակայն շիայական քաղաքական ուժերը հաղթանակ գրանցեցին: 2006 թ.-ի հունվարի 20-ին պաշտոնական հրապարակման համաձայն Իրաքյան միացյալ ցուցակը ստացել էր 128 պատգամավորական մանդատ (275 անդամ ունեցող խորհրդարանում), երկրորդ տեղում կրկին քրդերն էին զբաղեցնելով 53 պատգամավորական տեղ: Այս ընտրություններում զգալի հաջողություն գրանցեցին սուննիները, մասնավորապես, Իրաքյան համաձայնության ճակատը՝ զբաղեցնելով 44 տեղ: Նախկին վարչապետ Այադ Ալլավին ևս կարողացավ բավական մեծ թվով քվեներ ստանալ՝ խորհրդարանում ունենալով 25 պատգամավորական տեղ³⁸:

2005 թ.-ի դեկտեմբերյան ընտրությունները ևս կայունություն չբերեցին Իրաքի ներքաղաքական կյանքին: Էթնոդավանական տարբեր համայնքների միջև լուրջ հակասություններ էին առաջացել կառավարության ձևավորման և պաշտոնների բաշխման շուրջ: Հակառակ նրա, որ ազդեցիկ քաղաքական ուժերը հայտարարում էին, որ պատրաստ են երկխոսություն ծավալելու

³⁷ Independent Electoral Commission of Iraq; psephos.adam-carr.net (մուսք՝ 25.06.2022թ.):

³⁸ http://news.bbc.co.uk/2/hi/middle_east/4522060.stm (մուսք՝ 15.04.2022թ.)

կոալիցիոն կառավարություն ձևավորելու ուղղությամբ, այնուամենայնիվ, այդ գործընթացը ձգձգվում էր: Ընտրության արդյունքների հրապարակումից հետո 4-ամսյա ներքաղաքական լարված պայքարից հետո միայն հնարավոր եղավ հասնել փոխզիջումային լուծման: Բարձրագույն իշխանության մարմինների ձևավորման համար անհրաժեշտ էր հաշվի առնել ընտրությունների արդյունքում ստեղծված պայմանները և էթնոկոնֆեսիոնալ ուժերի հարաբերակցությունը: Արդյունքում 2006 թ.-ի ապրիլին՝ խորհրդարանի երկրորդ նստաշրջանի ընթացքում Իրաքի Հանրապետության նախագահի պաշտոնում ընտրվեց Քրդական հայրենասիրական միության առաջնորդ Ջալալ Թալաբանին:

2006 թ.-ի ապրիլին Վարչապետի պաշտոնում առաջադրվեց Դավա կուսակցության առաջնորդներից Նուրի Ջավադ ալ-Մալիքին: Վերջինս հայտարարեց, որ ցանկանում է ձևավորել այնպիսի կառավարություն, որում ներկայացված կլինեն Իրաքի հասարակության բոլոր շերտերը:

Հաջորդ կարևորագույն հարցը խորհրդարանի խոսնակի ընտրությունն էր: Այդ պաշտոնում ապրիլի 22-ին ընտրվեց սուննիական համայնքի ներկայացուցիչ Մահմուդ Մաշհադանին: Խորհրդարանի նախագահի տեղակալներ ընտրվեցին շիա համայնքի ներկայացուցիչ Խալիդ ալ-Ատիյան և Քրդական դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչ Արեֆ Թայֆուրը:

Սուննիական համայնքի մեկ այլ ներկայացուցիչ՝ Տարիկ ալ-Հաշեմին ընտրվեց հանրապետության առաջին փոխնախագահ: Երկրորդ փոխնախագահի պաշտոնը վստահվեց շիայական ազդեցիկ քաղաքական ուժ հանդիսացող Իսլամական

հեղափոխության խորհրդի ներկայացուցիչ Ադիլ Աբդել Մահդիին³⁹:

2006 թ.-ի մայիսի 20-ին Իրաքի խորհրդարանը հաստատեց կառավարության նոր կազմը: Ինչպես պետական բարձրագույն պաշտոններում նախարարական տեղերը ևս բաշխվեցին՝ հաշվի առնելով էթնոդավանական հարաբերակցությունը: Փոխվարչապետների պաշտոններում նշանակվեցին Սալամ ալ-Ջուբաին, որը ներկայացնում էր սուննիական համայնքը և քրդական դաշինքը ներկայացնող Բարհամ Սալիհը: Ընդհանուր առմամբ, նոր կառավարությունում քրդերին հատկացվել էր վեց նախարարական տեղ՝ այդ թվում արտաքին գործերի նախարարի պաշտոնը: Այն կրկին զբաղեցրեց ՔԴԿ անդամ Հոշեյր Ջիբարին: Ասորական համայնքի ներկայացուցիչ Ֆավզի Հարիրին նշանակվեց արդյունաբերության նախարար⁴⁰:

Ըստ էության, իշխանության նման բաժանումը ուժերի իրական դասավորվածության պայմաններում էթնոկոնֆեսիոնալ քաղաքական ուժերի միջև ձեռք բերված փոխհամաձայնության արդյունք էր, որն ամրագրված չէր սահմանադրության մեջ:

Այսպիսով, մշտական սահմանադրության հիման վրա ձևավորվեցին Իրաքի իշխանության բարձրագույն մարմիններն ու նոր, ազգային կառավարությունը: Իշխանության մարմինների ձևավորման ընթացքում պահպանվեց էթնոդավանական հարաբերակցությունը, որը լրջագույն ազդեցություն ունի Իրաքի արդի քաղաքական համակարգի վրա: Այս համակարգը հնարավորություն է տալիս բազմաշերտ և հակասություններով լի էթնոկոնֆեսիոնալ տարբեր համայնքների միջև հաստատել փոխզիջումային լուծում, միաժամանակ, սակայն չի ապահովում

³⁹ Шелест А., Долгий путь к новому правительству Ирака <http://www.iimes.ru/?p=4514> (մուտք՝ 25.04.2022թ.):

⁴⁰ Мосаки Н., Курды в новом правительстве Ирака <http://www.iimes.ru/?p=4632> (մուտք՝ 25.04.2022թ.):

երկրի խաղաղ զարգացումը՝ չբացառելով ոչ քաղաքական մեթոդների կիրառումը երկրի ներքաղաքական կյանքում:

THE 2005 IRAQI CONSTITUTION AND THE FORMATION OF A NEW SYSTEM OF GOVERNMENT

Spartak Baghdasaryan

(Summary)

In 2003 the invasion of Iraq by coalition forces led by the United States and the overthrow of the government of Saddam Hussein, the collapse of the army and state institutions, significantly exacerbated the ethnic-confessional contradictions existing in Iraq. Under the new conditions, it was necessary to take into account the real alignment of forces in the process of forming new authorities. To preserve the unity of Iraq it was necessary to involve representatives of various ethno-religious communities in the system of government. This article attempts to study the process of reconstruction of post-war Iraq, highlight the influence of the ethnic-confessional factor on the Iraqi system of government, the involvement of various communities in public authorities, and analyze ethno-religious issues. The core of the study is the permanent constitution of Iraq, adopted as a result of a nationwide referendum on October 15, 2005. The new constitution declared Iraq to be an independent, sovereign, democratic and federal state based on parliamentary government. Islam was declared the state religion and the main source of law. The constitution takes into account the religious and linguistic rights of the ethno-confessional communities of Iraq.

During the formation of power the ethno-confessional relationship was preserved, which has a serious impact on the modern political system of Iraq. The position of the president of the country was entrusted to a representative of the Kurdish community, the key position of the prime minister was taken by the Shiite community, and the position of the speaker of parliament was taken by representatives of the Sunni community.

КОНСТИТУЦИЯ ИРАКА 2005 Г. И ФОРМИРОВАНИЕ НОВОЙ СИСТЕМЫ ПРАВЛЕНИЯ

Спартак Багдасарян

(Резюме)

В 2003 г. вторжение в Ирак коалиционных сил во главе с США и свержение правительства Саддама Хусейна, распад армии и государственных институтов привели к значительному обострению существующих этноконфессиональных противоречий в стране. В новых условиях необходимо было учитывать реальное распределение сил в процессе формирования новых органов власти, а также для сохранения единства Ирака необходимо было привлечь представителей различных этно-религиозных общин в системе государственного управления.

В данной статье предпринята попытка исследовать процесс восстановления послевоенного обустройства Ирака, выделить влияние этноконфессионального фактора на систему государственного управления Ирака, вовлечение различных общин в правительственных органах. В центре внимания данного исследования является постоянная конституция Ирака, принятая в результате всеобщего референдума 15 октября 2005 г. Это был новый этап на пути политико-правового развития Ирака. Новая конституция провозгласила Ирак независимым, суверенным, демократическим и федеративным государством с парламентской республиканской формой правления. Ислам был объявлен государственной религией и основным источником закона. В конституции учтены религиозные и языковые права этноконфессиональных общин Ирака. Установлены полномочия и функции высших государственных органов. На основе постоянной конституции были сформированы высшие органы иракского правительства и нового, национального правительства. При формировании власти сохранялось этноконфессиональное соотношение, что оказывает серьезное влияние на современную политическую систему Ирака. Должность президента страны была доверена представителю курдской общины, ключевой пост премьер-министра занимает представитель шиитской общины, а должность спикера парламента было занято представителями суннитской общины.